

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոչտային համար 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրատարակուին անորոշ-
քովին կամ մասամբ:
Խմբագրութեան տղը 20 սանթիմ. երե-
ֆէն աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը չիւնի, փոխարեւը կանխիկ:

ԶԱՐԸ

ԸՆԴՀ. ԶԷՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ

Գրեթէ շաբաթէ մը ի վեր է որ բոլոր մեծ ու փոքր ազգաց թերթերը արձագանգ եղած են այն մեծ գաղափարին որ աշխարհի հըզօրագոյն եւ միահեծան վեհապետին զգացմանց անկեղծ արտայայտութիւնն է, Ընդհանուր գեղարվեստական շարժում: Ներքոյս Բ. Զարը կոչ կընէ աշխարհի բոլոր պետութեանց իսպառ հրաժարիլ պատերազմի խօսքի վայրագ պատրաստութիւններէն որը պետութեանց գանձերը կ'ըստպառնէ, ժողովրդեան անգործութիւնը կը վրդովնէ, երիտասարդ կեանքերը զօրանցներու ճնշիչ մտնուրտին մէջ կը խամբեցնեն ու կը հիւժեն: Ամեն տեսակ զոհողութիւններով զինեալ խաղաղութիւնը կուզենք պահպանել, կըսէ Զարը, ժողովրդեան մտաւոր ու ֆիզիքական ուժերը, աշխատութիւնը եւ գրամագլուխը մեծաւ մասամբ իրենց բնական գործածութեան կը շնորհակցեն եւ կը մըստենք ապագային կերպիւ: Հարկւաւոր միլիոններ կը ծախսուին այսօր նորահնար ահաբեկիչ գործիներ ստանալու, բայց վաղը նորանոր գիւտեր կ'ստիպեն առաջինները ձգել ու նորերէն ստանալ եւ այսպէս շարունակաբար. այնպէս որ երկրին մշակութիւնը, տնտեսական յառաջդիմութիւնը եւ հարկատուութեան արտադրութիւնը երեսի վրայ եւ անխնամ կը թողուին. եւ այս ամեն զոհողութիւններով մէկտեղ կրկին պատերազմի վտանգը անխուսափելի է:

Զարը այս ամեն դառն իրողութիւնները պետութեանց ուշադրութեանը ներկայելով սպառնալիքն ալ խաղաղութեան կործանարար գործութիւն մը ըլլալը կ'ապացուցանէ եւ մատնանի կընէ ընդհանուր գեղարվեստական շարժումը: Զարի այս տեսութիւնը եւ առաջարկութիւնը թէպէտեւ նոր վարդապետութիւն կամ նոր գիւտ չեն, բայց խնդրոյն կարեւորութիւնը եւ բղխած աղը նկատողութիւնը:

Թեան առնելով դարուս ամենամեծ հարցը կրնան անուանուիլ: Այո՛, աշխարհի մեծագոյն ինքնակայն է որ յանուն ժողովրդի բարութեանը կը խօսի եւ իր ազգու ձայնը արձագանգ կը գտնէ այսօր աշխարհի չորս կողմը: Յուսալի է թէ միւս սահմանադրական վեհապետներ ու նախագահներ եւս ինքզինքնին պարտաւոր պիտի զգան ձայնակցել Ռուսիոյ կայսեր:

Զարի այս առաջարկութեան բանաւորութիւնը որչափ նիւթական անհերքելի փաստերու վրայ հիմնուած է նոյնչափ ալ բարոյական մեծագոյն յաղթանակի մը առանցքը կը կազմէ: Երիտասարդ կայսրը կըսէ, «ազգաց իրաւունքը իրաւագէտներու խորհրդովը պէտք է վճռուի»: Մինչդեռ Պիլզնաք կըսէր, «իրաւունքը զօրաւորագունինն է, պէտք է գէնքը զայն վճռէ»: Աշխարհի բարօրութեան ու բարոյականի իսկական յաղաղութիւնը ահա հոս է, այս կէտին մէջն է. այլեւս իրաւունքը հզօրինը չպիտի ըլլայ, այլ արդարինը, բիրտ ուժը չէ որ պիտի յաղթանակէ այլ բարոյական ուժը:

Իցիւ թէ միւս պետութիւններն ու վեհապետներն ալ ընդունէին այս վեհ առաջարկը որով Պիլզնաքի ոսկորներուն հետ իր ստիգծած ճիւղալային քաղաքական դրութիւնն ալ անդառնալի կերպով ամփոփուեր նոյն գերեզմանին մէջ:

Զարին սոյն առաջարկի անկեղծութեան վրայ կ'ապաստուի զօրաւոր պատճառներ չկան գէթ առայժմ. Զարը բարենորոգիչ Աղեքսանդր Բ. ի մահաբանին ի յիշատակ կ'ընէ իր առաջարկը՝ որ կը սիրենք յուսալ թէ հոգւոյ անկեղծ յուզումէ մը բղխած է. եւ երբ գիտնայ իր բարձր ազգեցութեամբը զանի յարգել տալ բոլոր պետութեանց, ամբողջ մարդկութիւնն ալ պիտի ճանչնայ իր երախտիքը, եւ ապագային Նիքոլա Բ. ի յիշատակը ոչ միայն Ռուսաստանի այլ եւ բոլոր ազգերու մէջ պիտի յարգուի ու պաշտուի:

Բ. Գ.

ԸՆԾԱՆԻՔԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

Մայրեր պատրաստեմք, այս խօսքին մէջ անհրաժեշտ է ամբողջ մանկավարժական դրութիւն մը:

ՆԱԲՈՒՆՈՒՆ Ա. (Շար. Ասխորդի քիմիկ եւ վերջ)
Սակայն եթէ լաւ ընտանիքը, իբրեւ բարոյական ու մտաւոր կրթիչ, ամենալաւ զարգոյն է, ապականեալ ընտանիքն ալ թշուառութեանց ու մոլութեանց քառան է: Անթուրի եւս այն չարիքները զորս վատ ընտանիքը կրնայ հասցնել մանկութեան եւ չափահասութեան վրայ. ոչ մէկ ապագայ կրթութիւն կրնայ բուժել անոր պատճառած չարքը: Երբ ընտանիքի մը մայրը ծոյլ, լկտի ու անկարգ է, հայրը գինով, խաղաղ ու անպարտաճանաչ, իսկ բնակարանը կեղտոտ, աղմկալից ու շարունակ լի վէճով ու կռուով, թշուառութեան բնակարանը կը դառնայ անայնպիսի անկողն ու բնակէ ոչ միայն հանգիստը իսպառ հեռացած է, այլ ուրիշ փախչիլը անհրաժեշտ: Ինչ կրնան ըլլալ այդպիսի տան մէջ տպւիլ զատապարտուած մանուկները, եթէ ոչ հոգիով հաշմ, անբարոյական սրիկաներ, պատուհան թէ՛ իրենց անձին եւ թէ՛ աշխարհի:

Ուրեմն ընտանիքի բարոյական մակարդակէն կ'ախուժուին ազգի մը ապագան: Ընտանիքն ընկերութեան անկիւնաքարն է եւ անոր ամենաբնական պատկերը, ենթակայ ապականելու անհատական բարեբերութեան մը որոց հանդիսավայրն է: Կարելի է իրաւամբ կորսուած համարել այն ազգը որուն մէջ ընտանեկան բարեբերութիւնը եղծուած եւ ծնողական յարգանքը անհետացած է: Ազգ մը որ հարստութիւնը կուտքի պէս պաշտելու աստիճան ապականած է, որուն անհանները իրենց չնչին եսերուն կը գոհեն ամեն ինչ. այն ազգը թշուառ մահուան դատապարտուած է եւ դժբաղդութեան անաղին հարուածիին ջարդ ու փշուր կը խորտակուի: Եթէ ֆրանսական ազգին վերջին դժբաղդութիւնները քննենք, պիտի տեսնենք որ իր կրած աղէտներուն բուն պատճառը պարտականութեան զգացումին եւ ընտանեկան սրբութեան բացարձակ պակասն էր: Յիշատակի ժողովուրդը, յեղափոխութենէն ի վեր ամեն բան ծաղրելով, յարգանքի զգացումը սպաննած էր իր մէջ, կրօնը, ընտանիքը, հայրենիքը, պատիւ, ամէն ինչ ծաղրելի ու կատակի առարկայ եղած էր. թաւորներ անբարոյականութեան զարգացմը մամուլը՝ ցոփութեան ու լիտութեանց հաւաքածոյ, թոյնը կ'ախել կաթիլ աւոր երակներուն մէջ ծորելով մտաւոր:

Բայց ու բարոյապէս քայքայած էր ամբողջ ազգը: Ափսո՛ս սակայն, որքան դառն եղաւ պատիժը. կորստեան անդունդը բացուած էր իր առջեւ եթէ վայրկեան մըն ալ դանդաղէր սթափելու:

Օրինակ առնենք մենք ալ. ո՛չ ապաքէն նոյն զահալէժին եղբրքը կը գտնուինք: Պէտք չէ որ ծնողները լուկ իրենց երջանկութեան համար սիրութեան զգացում մըն է: Տիրուր փորձառութիւնը մեղի կը սովորեցնէ թէ այս եսասիրութիւնը յանգէտս կը թափանցէ մեր բոլոր զգացումներուն մէջ: Պէտք է սիրել մանուկը իրեն համար միայն եւ հոգալ անոր պէտքերը անոր ապագային պատասխանատու ճանչնալով զմեզ: Որովհետեւ տղան միայն ընտանիքին մէջ ապրելու համար չէ ծնած, քիչ ատենէն կեանքի կուտին մէջ պիտի մտնէ ուր դառն փորձութիւններ իրեն կը սպառնան: Պէտք է ուրեմն անոր պարգեւել առնական սովորութիւններ: Քանի որ «մարդու» զերը պիտի կատարէ, պէտք է սովորեցնել ինքզինքին բանելու, իր ճամբան առանձին հարկելու գործին, ի հարկին ինքն առաջնորդ մը ըլլալու համար: Իսկ մեր մայրերն ընդհակառակը կ'աշխատին փուճ երկրկնելով տղուն գործունէութեան շրջանակը սեղմել, ամեն ապագայութեան ու յանգիստութեան բնազդ անոր մէջ սպաննել, թոյլ ու մեղկ ստորուկի մը վերածելով զայն որ իր արիւնը քամոզ վայրագ դահճին առջեւ լալ ու ճուլ միայն գլտէ, բայց ո՛չ կուտիլ:

Որոհեցէ՛ք, մայրեր, որ ձեր եսական կոյր սիրոյն հետեւանքն է ձեր քաշած կակիժը. ձեր անհեռաւոր քայլերն էին որ ձեր 300000 զաւակներն արեւան վիհերը գլորեցին: Ինչո՞ւ մէյմէկ առիւծ չի չինեցիք զանոնք այնքան տարիներ ձեր ձեռքին տակ մեծցնելով: Գէթ որոշեցէ՛ք այսուհետեւ այնքան փափուկ ու այնքան զգոյշ չլըլալ. ցցուցէ՛ք որ մայրական սէրն ալ կրնայ քաշութեան բոլոր տեսակներն արտադրել: Դուք իսկ բացէ՛ք ձեր տղոյ ասպարէզը եւ ձգեցէ՛ք որ հոն յառաջանան քաջ մարդիկներու պէս:

«Ուրբան ալ տկար ըլլաք դէպքերը արդէն սորվեցուցին ձեր ընթանալիք ճամբան: Ինչո՞ւ այս վիճակներուն մէջ ինկանք. ո՛չ ապաքէն մեր վրայ ունեցած սխալ հաւատքին պատճառաւ: Կարծեցիք թէ լաւ ենք. կը զուարճանայինք, ամէն հանգստութիւն կը վայելէինք. եւ իրաւ ալ ամէն բան լաւ կ'երթար մինչեւ որ փորձաքը եկաւ եւ ցցուց վերջապէս թէ ո՞ւր ենք: Աշխատենք գտնէ մեր տղաքները ազատել այս ստորուկի վիճակէն. նոր

աշխարհ մը բանանք անոնց առջեւ...
եւ ինչպէս որ մեր գրիչը ճերմակ թըղ-
թին վրայ կը գրէ. մեր կամքն ալ այդ
մանկանց մաքուր սրտին ու մտքին
վրայ թո՛ղ դրոշմէ նուիրական բառերը.
սե՛ր, ազատութիւն եւ հայրենիք»:

Ահա այսպէս կը խօսէր, մօտ հարիւր
տարի առաջ Ֆիլիպ Գերմանացի ժողո-
վուրդին երբ նաբօլէօնի բռնակալու-
թեան զոհ եղած էր: Գերման ժողո-
վուրդը մտիկ ըրաւ. անոր ձայնը եւ
փրկուեցաւ: Իցի՛ւ նոյն խօսքերը մեր
սիրտերն ալ լեցնէին եւ նոյն արդիւնքը
մեր ազգին համար ալ իրականանար:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Ֆիլիպէ 17 Օգոստ. 98.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բազմաթիւ ծնողաց եւ պատուաւոր
ազգայնոց ջերմ փափաքներէն քաջա-
լերուելով ձեռնարկած եմ քաղաքիս
մէջ հիմնել մանչերու գիշերօթիկ եւ
ցերեկեայ վարժարան մը: մանկապար-
տէզով մէկտեղ, անկախ ամէն կամա-
յականութիւններէ եւ բոլորովին զերծ
այն անպատեհութիւններէն որոնք յա-
ճախակի կը ներկայանան հայ մանկըտ-
ոյն դաստիարակութեան գործին չուրջը
եւ կարգիլէն անոր բնական ու յարա-
մեւ ընթացքը:

Կրթական այս հաստատութեամբ իմ
ալ ամենաջերմ փափաքս է խնամքիս
յանձնուած ուսանողներուն ազգային
հիմնական դաստիարակութիւն մը տա-
լով հանդերձ՝ թէ՛ պատրաստել զանոնք
կառավարական բարձրագոյն վարժա-
րաններու ընթացքին եւ թէ՛ աւանդե-
անոնց գործնական կեանքի եւ առեւ-
արական աշխարհին մէջ անհրաժեշտ
եղած գիտական եւ ուսումնական ծա-
նօթութիւններու ընտրելագոյն պա-
շար մը:

Այս նպատակս արդիւնաւոր կերպով
իրագործելու համար արդէն սպահոված
եմ փորձառու եւ գործին նուիրուած
ուսուցչական մարմնոյ մը աշխատակ-
ցութիւնը:

Աւելորդ չեմ համարեր յայտարարել
նաեւ, թէ տղայոց ինչպէս բարոյական
եւ մտաւոր զարգացման, նոյնպէս եւ
անոնց ֆիզիքական ողջպահիկ պայման-
ներուն ու լաւ անուղիղ վերին ա-
ստիճանի հոգածու պիտի գտնուինք:
Արդէն գիշերօթիկ աշակերտք ընտանե-
կան շրջանակի մը մէջ պիտի գտնուին:

Այս նպատակին համար վարձուած
չէնքը առողջապահական բոլոր պահանջ-
ները լի ու լի կը գոհացնէ:

Կը սիրեմ յուսալ որ մասնաւորապէս
Պուլկարիոյ հայութիւնը, պիտի բարե-
հաճի քաջալերել իմ այս ձեռնարկս՝ ա-
պահով ըլլալով թէ՛ ո եւ ջանք եւ
զոհողութիւն չպիտի խնայեմ իր զա-
ւակաց ճշմարիտ օգտին ու յառաջի-
մութեան համար:

Ուսմանց ծրագիրը կը բովանդակէ,
սովորական լեզուներէն ու գիտութիւն-
ներէն զատ, Անգլիերէն եւ Գերմանե-
րէն (որոնք սակայն կամաւոր պիտի
ըլլան), գործնական տոմարակալու-
թիւն, առեւտրական գիտելիք եւ վա-
ճառականական թղթակցութիւն:

Աշակերտաց տարեթոշակն է.

Գիշերօթիկներուն համար 30 նաբօլ.
ցերեկօթիկներուն » 6 »

Մանկապարտէզի (երկու սեռէ) 3 »
միշտ վեցամսեայն կանխիկ վճարելի:

Մէկէ աւելի զաւակներ ունեցողնե-
րու, ինչպէս նաեւ պաշտպաններու
համար կարեւոր զեղչ:

Վարժարանը կը բացուի յառաջիկայ
սեպտեմբեր ամսոյ 15 ին:

Ուրիշ կարեւոր եւ լրացուցիչ տեղե-
կութեանց համար բերանացի կամ գրա-
ւոր դիմել:

ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՎԱՌՆԱ հասցէիս:

Կրօն Միքայէլեան

ԹՎԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէ, 21 Օգոստոս 1898

Քաղաքիս ազգային գործերը կը
շարունակեն իրենց անգոյն ու տար-
տամ վիճակին մէջ մնալ. Նորըն-
տիր թաղ-խորհրդոյ վաւերացումը
դեռ չէ եկած Ստրիանուպօլսէն -
Ազգ. վարժարանաց հոգաբարձու-
թիւնը արձակուրդէն ի վեր վար-
վարժարանին բոլոր պաշտօնեաները
հրաժարեցուցած է, բայց տակա-
ւին նորերը չեն ընտրուած: Կը լը-
սենք թէ բազմաթիւ ուսուցիչ-
ներ Պատ. հոգաբարձութեան դի-
մում են ըրած այս առթիւ որոնց
մէջ կը գտնուին մէկ քանի ծանօթ
ու փորձառու անձնաւորութիւններ
եւ որոնք առաջարկած են դասա-
տուաց ընտրութիւնը մրցումով կա-
տարել: Ժամանակէ մը ի վեր տեղ-
ւոյս ազգայիններուն մէջ ընդհա-
նուր դժգոհութիւն մը կը տիրէ
Ազգ. վարժարաններու անկանոնու-
թեան պատճառաւ: Կը յուսանք որ
Պատ. հոգաբարձութիւնը յառա-
ջիկայ տարեշրջանին համար ամեն
ջանք պիտի թափէ վարժարանը
աւելի կանոնաւոր եւ գոհացուցիչ
վիճակի մը հասցնելու: Գիշերադ-
ղաբար կալուածները զբաւի տակ
են եւ պարտքը փոխանակ նուա-
զելու, յոռի մատակարարութեամբ
անշուշտ, հետզհետէ կաւենայ:
Կըսուի թէ Նորընտիր թաղ-խոր-
հուրդը չի պիտի կարողանայ հա-
մաձայնութիւն գոյացնել հոգա-
բարձութեան հետ: Մենք չենք
կրնար ըմբռնել անհաշտ հակառա-
կութիւն մը ազգ. տեղական շա-
հերը պաշտպանել եւ նոր սերուն-
դին դաստիարակութեան վրայ
հակել կոչուած ազգ. երկու մար-
միներու միջեւ: Եթէ այդ պաշ-
տօններու գլուխ անցնող մարդիկ
կատարելապէս անհաճախողիւր եւ
իրենց ստանձնած պարտականու-
թեանց գիտակից անհատներ են,
որուն երեք չենք տարակուսիր,
համաձայնութիւնը չուտով կը կա-
յանայ. հակառակ պարագային վը-
նասակար տարրերը պէտք է իս-
կոյն հեռացնել ամեն անհատական
նախապաշարում զոհելով դաստի-
արակութեան սիրուն:

Միւլթարական նրեւոյթ մըն է
սակայն նոր լսարան. լիթերցարա-
նի մը բացումը նախաձեռնու-
թեամբ տեղւոյս հայ երիտասար-
դութեան լուրջ ու զարգացած մա-
սին: Ընկերութիւն մը կազմուած
է արդէն որ 30-40 անդամակից
ունի այժմ, եւ որոնք շարաթա-
կան որոշ վճարումներ ընելով պի-
տի հայթայթեն հարկ եղած թեր-
թերու, հանդէսներու, զրքերու
ծախքերը: Տուն մը վարձուած է
արդէն այս նպատակով եւ ընկե-
րութիւնը իր գումարումները սկը-
նած է կատարել: Այս տեսակ
ազգ. հաստատութիւններ ամեն
հայ անհատէ քաջալերուելու ար-
ժանի են. որովհետեւ օտար մի-

շաղկապ մը մէջ, ինչպէս է միշտ,
անոնք միայն ազգ. ուրոյնութիւ-
նը վաւ պիտի պահեն: Յաջողու-
թիւն կը մաղթենք այս նորահաս-
տատ ընկերութեան եւ կը փափա-
քինք որ չունենայ այն վաղահաս
վախճանը որուն ենթարկուած են
դժբաղդաբար բազմաթիւ հան-
գունատիպ հաստատութիւններ մեր
մէջ:

Պուլկար կառավարութիւնը ու-
րոշած է յառաջիկայ սեպ. 21 ին
արհեստական քօնքնու մը կատա-
րել քաղաքիս հասարակաց պար-
տէզին մէջ, որուն պիտի կարո-
ղանան մասնակցել Ֆիլիպէի, Թա-
թարազարճըզի, Էսկի Չակարաի,
Սիլվէնի, Պուրկազի եւ խաթէօյի
բոլոր արհեստաւորները: Գեղեցիկ
առիթ մըն է ասիկայ հայ արհես-
տաւորներուն համար ուրկէ կրնան
օգտուիլ իրենց հանճարին բոլոր
նրբութիւնները պարզելու եւ ար-
հեստական արժանիքը գնահատել
աւելի կառավարութեան ուշաա-
րութիւնը գրաւելու համար:

Լ.

ՆԱԽԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷ

Թաւրիզ, 5 Օգոստոսի. — Պարս-
կաստանի աշտման գրութիւնը
չատ խառն է. համադանում չէյ-
խի եւ մութաշարի (երկու աղանդ-
ներ) մուշտէյիդները եւ մուլաները
միացած տեղի տալով հետ մի-
մեանց դէմ կուռն են. խօսում
ժողովուրդը հացի թանկութեան եւ
քրութեան պատճառով (լիտրը 4
դրան) ցոյց է անում տէրութեան
դէմ: Մարաղայում շուկան կրակ
է ընկել եւ մօտաւորապէս 880 խա-
նութ է այրուել, որից մօտ 6.700.000
թուման (1,400,000 ուսաց ըուպ-
լի) քնաս են հաշուում. Ղարաբա-
ղում թուրքերը մի պարսիկ սպա-
նելով՝ ձգել են Աղազան հայաբ-
նակ գիւղը եւ ասում են, թէ հա-
յերն են սպանել. իսկ թաւրիզում
օրուայ հարցը հացի խնդիրն է,
հացը թանկացել է. առաջ չորս
արասի էր, իսկ յետոյ եղաւ 1
1 արասի, այն էլ անունն էր մի-
այն հաց: Անցեալ յուլիս ամսի
28ին, առաւօտեան ժամը 10ին
յանկարծ շշուկ բարձրացաւ, թէ
խոռվութիւն է լինելու, որովհե-
տեւ հաց չկար. մի բոլակի ըն-
թացքում թէ հայ եւ թէ պարսիկ
շուկաները կողպելով փախան ի-
րենց տները: Չմոռանամ ասել, որ
ինչպէս ուրիշ անգամն էր, այս
անգամ էլ օրուայ հերոսները կա-
նայք էին: Այդ օրը սպանուում է
մի կին եւ մի քանի մարդիկ էլ վի-
րաւորում են: (Յոյցից 2 օր ա-
ռաջ Ատրպատականի ընդ. նահան-
գապետ Ա. Թիւրքումը թէհրան
հրաժարական էր ուղարկել եւ ինքն
էլ այդ օր գտնուում էր Մէմէդ
թաւա կոչուող ամարանոց-գիւղում,
ուր հիւր էր գնացել ուսաց հիւ-
պատոսի մօտ: Հրաժարականի
պատճառը հետեւեալն էր. թագա-

ժառանգը հացթուխներից 800
թուման (1,600 ըուպլի) փող ստա-
նալով՝ իրաւունք էր տուել հաց-
թուխներին, որ հացը թանկաց-
նեն, եւ ինքն էլ գնացել էր վառ-
պինճ կոչուող գիւղը ամարանոց.
քաղաքը մնացել էր անտէր: Ա-
ռաջին օրը ցուցարար ամբոխը
մտնելով հայոց թաղը, ուղղւում էր
գնալ մտնել ուսաց դրօշակի տակ,
բայց թաղապետը իւր ոստիկան-
ներով առաջները կտրում եւ թա-
կելով դուրս է հանում հայոց թա-
ղից: Շուկան կողպուում է մինչեւ
հինգշաբթի օրը. այդ օրը վեր-
ջապէս մի խմբի յաջողւում է գնալ
մտնել ուսաց հիւպատոսարանը,
հայոց թաղապետը գալիս է եւ
խնդրելով, յորդորելով այդ խմբի
մի մասին դուրս է բերում այդ
տեղից: Առաւօտը ժամը 11ին
(ըստ եւր.) գալիս է մի ուրիշ խումբ
10—15 կանանց առաջնորդու-
թեամբ: Այստեղ պէտք է յիշել,
որ առաջին խումբը երբ որ մըտ-
նում է ուսաց հիւպատոսարանը,
թաղապետը հրամայում է, որ հա-
յոց թաղի դարբանները կողպեն,
որպէս զի նորանոր խմբեր չաւել-
նան հիւպատոսարանում, բաց են
թողնում թաղապետի տան մօտ
գտնուող 2 դարբաս միայն, որ-
տեղ զինեալ ոստիկաններ են կանգ-
նում եւ չեն թողնում, որ պարսիկ-
ները ներս գնան: Այդ պատճա-
ռով երկրորդ խումբը թաղի բո-
լոր դռները կողպուած գտնելով,
ստիպուած է լինում թաղապետի
տան մուտքի դռնից ներս խուժել.
հայոց թաղապետը, ոստիկանա-
պետը եւ ոստիկաններն աշխատում
են յետ դարձնել ցուցարարներին,
ոստիկանապետը երկու անգամ ա-
տըրճանակ է պարպում, բայց ոչ
ինչի օգնում. վերջ ի վերջոյ ամ-
բոխը ներս է խուժում եւ գնում է
հիւպատոսարան: հիւպատոսարա-
նում երկար ժամանակ աղաղակում
էր ամբոխը. «Ալլահ, Ալլահ»:
Միմեանց յետեւից ուսաց հիւ-
պատոսարան են գալիս՝ Ղալա-բէկը
(թաղապետը), Մուշտէյիդը-Գոլ-
լէն եւ մուշտէյիդի կողմից ուղար-
կուած երկու սէիդներ յորդորելու
ամբոխին, որ դուրս գայ հիւպա-
տոսարանից: Սակայն նրանց յոր-
դորն ապարդիւն է անցնում, ամ-
բոխը չի համոզւում այդտեղից
դուրս գալու եւ եկող պաշտօնեա-
ները հեռանում են:

Այդ օրը թագաժառանգն ամա-
րանոցից վերադառնում է քաղաք եւ
հացի լիտրը առաջուայ արժէքով
է հրամայում որ ծախեն (լիտրը 4
արասի): Բայց այդ բանը չի օգ-
նում, որովհետեւ հաց չկար: Վեր-
ջապէս յուլիսի 31ին հեռագիրը
թէհրանից ուրախ լուր է յայտ-
նում. — պաշտօնական եղած Ալի
Ասկար խան Աթաբէկ-ու-Աղամը
նորից Սադրազամ է նշանակուել
եւ ամսի 30ին, երեկոյան ժամը
6ին, խալիթ է հագել: (Պարս-
կաստանում սովորութիւն կայ, որ

երբ մէկը պաշտօն է ստանում, նրան կամ մի հազուադէպ, և կամ թէ մի շալ ընծայ են տալիս, որը կոչուում է խալաթ)։ Այդ օրը կէս օրից 2 ժամ առաջ Ամիր Նիզամը գալիս է քաղաք։ Թագաժառանգը իւր բոլոր ծառաներով ընդառաջ է գնում նահանգապետին և իւր մօտ ճաշին հիւր է տանում։ Քաղաք մտնելով մի հացթուխի ականջ է կտրել տալիս և մէկին էլ ծեծում։ Նոր Սադրազամ Ամիր Նիզամի հրաժարականը յետ է տալիս և նորանոր աւելի ընդարձակ իրաւունքներ է ընծայում Ամիրին, որպէս զի ինչ որ ցանկանայ՝ անէ Ատրպատականում։ պատասխանատուն Սադրազամն է։

Ուրբաթ օրը կառավարութեան մի ուրիշ պաշտօնեայ գալով հիւպատոսարան զանազան խոստումներով համոզելով ամբոխին դուրս է բերում հիւպատոսարանից։ Շաբաթ օրունից խանութները բացուում են, բայց ոչ բոլորովին, այլ կիսովին։ Շաբաթ օրը հացի պատճառով կռիւ լինելով՝ մի թուրք խփում է մի անգլիական պատակ թուրքի և վիրաւորում է նրան։ վիրաւորուածն այժմ անգլիական հիւպատոսարանում բժշկւում է։

Այժմ ամբողջ շուկան բաց է և յոյս կայ, որ հացի տագնապը շուտով անցնի։

Նոր-Դար

Մ Ո Ւ Տ Ք

Ազն. Տեսութ.	Ֆր. Մն.
Աստարճեան Եղբարք	114.25
Ս. Գոյումճեան	104.25
Ոսն	81.40
Կ. Էգնակեան	60
Յ. Մ. Գ. Ծամառճեան	50
Ալինախ Եղբարք	41.27, 50
Քեր. Կիւմիւշճեան	20.85
Աբր. Կիւմիւշճեան	20.85
Լ. Յնաղկեան	20.85
Կար. Հարենց	20
Միւր. Պատմաճեան	20
Թումասեան Եղբարք	15
Մ. Շիրինեան	15
Գր. Կրտիզօֆ	10.42, 50
Չրաճեան եւ Չպուքճեան	10
Խաչ. Սվաճեան	10
Ջանազաններէ	8
Գ. Թօգաթլեան	5
Յ. Ա. Մեսոյպօլի	5
Ա. Քրքքէսէլեան	5
Մելիքօֆ	5
Հ. եւ Ա. Սէթեան Եղբարք	5
Պ. Վարդան	2
Սուքիասեան	2
Մ. Շիրինեանի ձեռամբ հանգանակում	107.20
Գ. Գալաֆեանի քով նախորդ հանգանակութենէ	157.60
	915.95
Պուլկ. Երթ. Ընկերութեանէ	
Ա. անգամ ետ առնուած	16.75
Բ. » » » »	44.75
Մայիս 30 էն ց 10 Օգոստոս 10 անգամ շրջաբերուած դանձանակի հասոյթ	159.55
	Ֆր. 1137

Ե Լ Ք

	Ֆր. Մն.
Բեռնակիր եւ կառք	1
Արեւ. Երկաթ. Ընկ. 2 վա-	
կոնի վարձք մինչեւ եամպօլ	583.27, 50
Պուլ. Երկթ. վարձք եամպօլ-լէն մինչեւ Պուրկազ	95.82, 50
Կարասեաց համար վճարուած	63.55
Պուրկազէն Պոլիս շոգանակի անցագիր	238.75
Գաղթականաց ուսեստի եւ այլն զանազան ծախք	69.90
Հեռագրի	3.70
Ֆիլիպէէն ասկա մեկնող մի-քանի կարօտելոց նպաստք	26
	Ֆրանք 1086
Աւելցած պատրաստ դրամ	51
	Ֆր. արծաթ 1137
Ֆիլիպէ, 14/26 Օգոստոս 1898.	

Ման. — Գանձուած ու ծախսուած 20 ֆրանքնոց ոսկեդրամներն 20.85 մնթ. արծաթ դրամի փոխուած են։

ԼՐԱՔԱՂ

—Վանայ Տօմիկեան Բիւրերը տեսնելով որ Ելոր Դարի թաղին կարգ մը հայերուն խիզճը դրամով կը գնուի եղբր, քաջալերուելու ու գիմեր են Մոկս թաղի հայերուն, ամենքը մէկէն 60 ոսկիով Հոռովմայ Եկեղեցւոյն որդեգրելու առաջարկն ըրեր են. բայց Մոկս-ցիք խրոխտաբար մերժեցին։

Այս կաթոլիկ ու բողոքական միութեանները կրօնքի գինը դեռ մինչեւ ուր պիտի իջեցնեն արդեօք։

—Ս. Պատրիարքը անցեալ շաբաթ օր ի Պատրիարքարան ընդունելով Վանեցի ազգայիններու պատգամաւորութիւն մը որք եկած էին կարօտելոց եւ կրօնափոխութեան գիմոններու խնդրոյն համար, ցաւ յայտնեց որ կարելի չէ եղած Վանայ նման կարեւոր վիճակի մը համար կարող եկեղեցական

մը Առաջնորդ նշանակել. բայց հիմայ յուսարի է եղբր որ Ներսէս Կ. Վ. Արաւանեան էջմիածնէ դարձին Վանայ Եպիսկոպոս Առաջնորդն ըլլայ։

Պատրիարք Օրմանեան, իր ապիկարութիւնը ի լուր աշխարհի կը խոստովանի. հովիւ մը չէ կրցած զրկել Վանի պէս բազմահայ վիճակ մը, ուր մարդորս օտար կրօնաւորներ կը վիստան ու ժողովուրդը շուար ու անպաշտպան, անոնց ոսկիներէն չլացած կը բաժնուի իր ազգային նուիրակն աւաղանէն։ Երեսին ճերմակ Պատրիարքին ալ Վարչութեան ալ։

—Բիւզանդիոնի մէջ կը կարդանք թէ Սուլթանը իր գահակալութեան տարեգարձին առթիւ իրատէ մը հանած է, որպէսզի յաւելում մը ըլլայ Ազգ. Հիւանդանոցին եւ նմին յարակից Որբանոցին տրուած պետական հացի ու մսի ամենօրեայ պարէնին վրայ։ Օրական 51 օխա միւր 150 օխայի եւ 340 օխա հացը 600 օխայի բարձրացուցած է, եւ թէ այս մասին հարկ եղած յանձնարարութիւնները եղած են Բ. Դրան։

Այս առթիւ Պօլսոյ հայ թերթերը խորին երախտագիտութեամբ ներբողներ կը կարդան Սուլթանի բարեացակամութեան նկատմամբ, Այո՛, կ'արժէ, բայց այդ որբերու խողովորուած ծընողներն եւ նոր խոգճութիւններն։

—Կարապետ Երամօֆ, որ Գէտիգի տասանորդի տրոց վարձակալ եղած էր ասկէ առաջ, 1302ին (հիճրէթի) Պօլիս եկած է եւ անկէ ի վեր ուր երթալը յայտնի չէ։ Արդ, Կարապետ Երամօֆ 820 ոսկիի գումար մը ունի աւանդ ձգուած մէկուն քով։ Ինք կամ իր ժառանգորդները պէտք է դիմեն Բիւզանդիոնի խմբագրատունը տեղեկութիւն ստանալու համար։

—Մուսուլէն եկած վերջին լրոց նախով, սոքն սկսած է զգալի ըլլալ Մուսուլի եւ շրջակայներուն մէջ։ Կառավարութիւնը միջոցներ ձեռք կ'առնէ եղբր ժողովրդեան պիտոյից օգնելու համար։ Անշուշտ Իսլամ ժողովրդոց։

—Ամերիկայի հայ ժողովուրդի բաղձանքին համեմատ Գեր. Յով. սէփ եպիսկոպոս Սարաճեան Սիւսիայեալ Նահանգաց առաջնորդ ընտրուած լինելով, ըստ վեհ. կաթողիկոսի հրամանին, էջմիածինէն ճամբայ ելած էր իր պաշտօնատեղին երթալու համար. այժմ Մարսէյ հասած է, ուր քանի մը օր մնալէ վերջ իր ճամբան պիտի շարունակէ Բարիդ, Լօնտօն և Մանչէսթըր հանդիպելով. իր առաջնորդանիստ աթոռը պիտի հաստատէ Ուսթըրի մէջ։

Նոր-Դարէն.

—Վրաստանի երբեք մայրաքաղաք Մցխէթի հնագոյն մայր եկեղեցին վերանորոգելու համար ներկայումս նուիրաբերութիւններ են հաւաքում։ Երկրորդասան Առաքելոց անունով Մցխէթի այդ եկեղեցին նոյն նշանակութիւնն ունի վրաց համար, ինչ որ միւր համար Ս. Լլիւթիածինը, Այն տեղ են թաղուած Վրաստանի ինքաւորներէից ու կաթողիկոսի միջ շուտը. այն տեղ պահուած կան քրիստոնէական հին սրբութիւններ, որոնց մէջ՝ աւանդաբար պահուած է Քրիստոսի անեղծ պատմութեանը, Եկեղեցին հիմնուած է Դ. րդ դ. ա. ընդ, երբ վրացիք Ս. Նունէից ընդունեցին քրիստոնէութիւն։ Մըցխէթի եկեղեցու զմայեցիները հայ-

կականի նման կոնաձե են, և քնասուել են վերջին անգամ 1818 թ. պատահած երկրաշարժից ու նորոգուել։

—Ս. Պատրիարքը Սուլթանին գահակալութեան տարեգարձին առթիւ ունեցողութեան ընդունուած է, ուր իրարու կամ յանուն հայ ազգին սովորական շողոքորթ խօսքեր փոխանակուած են։

—Ազգ. հիւանդանոցի նոր հոգաբարձութիւնը մեծ եռանդով կը գործէ. Հոգաբարձութեան բժիշկ անդամներն ապաստանելոց վիճակը տեղւոյն վրայ լրջութեամբ քննելով նոր կարգադրութիւններ ու տեղափոխութիւններ ըրած են։ Մինչեւ ցարդ ապաստանելոց օրական 10 ական տրամ կաթ կը տրուի եղբր, նոր Հոգաբարձութիւնը որոշեց է 50 ական տրամ կաթ մատակարարել։

Գալով հիւանդանոցի նիւթաւան հասոյթներուն, միջակ դասակարգի յատուկ նպաստի տոմսեր պիտի բաշխուին Պօլսոյ թաղերը, Հոգաբարձութեան անդամներուն և կամ անոր կողմէ նշանակելի անձերու ձեռքով բաշխուելու համար մարդասէր ազգայիններու։

ԵՆՆԻ ԳԸՐԿԸՆ

Շու սոս ալլարտա թիւրքերին վէ Գիւլալէրին էրմէնիլէրէ գարշը իճրա իթտիլէրի հաշարաթը Լ'Առմէնի պէր վէճհի աթի մուխ թասարէն տէրճ իթմիլ տիր։

«Տրապիզոն վիլայէթի տախիւլինտէ պիր էրմէնի քէօյիւնտէն թիւրքեր իբի էվ սոյմըլար վէ իբի էրմէնի էօլտիւրմիւլլէր։»

«Պիթլիս վիլայէթինտէ Սագ քէօյիւնտէն Գիւլալէր իբի էվ սոյմուլլար վէ 4 էրքէք, 7 գարը վէ չօճուգ էօլտիւրմիւլլէր։ Գէղա եազըն պիր քէօյտէ իբի էրմէնի էօլտիւրմիւլլէր։»

«Պիթլիս մահպիսանէսինտէն 15 էրմէնէ գաշմըլ օլմաղլէ, թիւրք հիւքիւմէթի պիկիւնահ էրմէնիլէրտէն 70 քիչիտէն զիյատէ հապս իթմիլ վէ պիր չօգ էրմէնիլէրէ տախիլ չէտիտ իսկէնճէլէր վերմիլ տիր։ Հիւքիւմէթ Պիթլիս օվաւ սընտա էրմէնի գօմիթէլէր պուրմագ իւմիտինտէ օլուպ, պու սէպէպտէն բէք չօգ պիտուլ վէ պիկիւնահ էրմէնիլէրէ էն չէտիտ է. զիյէթլէր վէ իսկէնճէլէր վերմէքտէ տիր, չօգլարընը կազ եազը իլէ սաղ սաղ եազմըլլար վէ պաշգալարընը ազուլարընը քէսմիլլէր, ճէպրէն էնէմիլլէր վէ եախօտ գըլար։ Էլ չիլլէրէ տէլիլ տէլիլ եաբմըլլար տըր։ Սուրէթի վահշիյաւնէտէ պագէրէ գըղլարըն վէ կէնճ գարըլարընը ըրլլանընա կէշմիլլէր։

Էրմէնի մանասթըլլարընը վէ քէօյլէրի սոյմուլ վէ չօգ քէօյիլլէրի հապս իթմիլլէր, պիր էօլճընը պէյանընա նազարէն հապս օլընանլար 150 քիչիտէն զիյատէ

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

1898 Մայիս 10 ին, Փ. Պօլսէն Կ. Պօլիս զրկուած 80 հայ զաղթականներու համար հաւաքուած դրամոց ու ծախուց։

վէ պաշտ 150 քիլոմէր իսկէն՝
լէրէն էօլտիւրմիւլէր տիր :

Բօլիք. Գօրէսք.ին Սթանպօլ
մուկալիւրնտէն ալտըր մալիւմթ
իւզրէ, վան վիլայէթինտէ Գիւրտ.
լէր՝ Պահէզիք, Մալքապա վէ Է-
րիկան նամ էրմէնի քէօյլէրինի
հաղմա իթմիլէր : Թիւրք զապ-
թիլէրէր էրմէնի հօլճըլարը մու-
հաֆազա իթմէք վատը իլէ հօլա
չըգուպ, անլէրի սօյմուլար :

Պու վահշիլիքէրին էքսէրիսի
գօնսօլտարըն ըրթօթլարը իլէ
Սթանպօլ էլիլէրինէ պիւտիլիմիլ
տիր :

Էն Սօն հալատիսէ պինսէն,
վիլայէթիլէրտէ պիր կէօնա թէհա-
վիւզաթ զուհուրինտէ էրմէնիլէրի
մուհաֆազա իթմէք իշիւն Պապը
Ալի վալիլէրէ էրմիւրնմէլէր հօլ-
լամըլ :

ՏԱԽԻԼԻՅԷ

—Վիւքէլա ընդիսի վէ խարի-
ճիյէ նազըրը Մ. Սթօյիլօֆ Մօնթ
—Բիւտա 20 կիւն թէպօլիլի հալա
իտուպ, կէչէն սալը կիւնիւ Սօ-
ֆիայա ալտէթ իթմիլ : Մուճա-
իլէյհին շիմսի սըհէթի պէրքէմալ
օլուպ, մէմուրիլէթինէ տէվաճ իթ-
մէքտէ տիր :

—Սօֆիանըն խայրաթիւսահմն
չիրքէթի թարաֆընտան շէհրի
մէշքիւրտէ թէհսիս օլընան հէ-
թիմհանէնին (որբանոց) գանուհնա-
մէսի Մէարիֆ նէզարէթիլին թէք-
լիֆի իւզէրինէ Բրէնս հազրէթիլ-
րինտէն թաստիգ օլընմըլ ալը :
Մէշքիւր հէթիմհանէտէ 100 գա-
տար էրքէք վէ գըզ էօքսիւզլէր
(5 տէն 10 հաշընտա) թէայիլիլ ու
մուհաֆազա օլընմազար :

—Բարիլ Օսմանլը սէֆարէթ-
հանէսի սապըզ միւսթէշարը նէ-
ճիպ Մէհմէտ էֆ. Սօֆիայա Օս-
մանլը գօմիսէրի թային օլընմըլ
տըր :

—Թիւհարէթ վէ զըրաթ նա-
զըրը Մ. Վէլիլէգօֆ պիր գաշ կիւն-
տէն պէրու Սթանպօլտա պուլընպ,
Թիւրքիա վէ Պուլկարիա պէյնին-
տէ իտիսալ վէ իսրաճ օլընան մալ-
լէրին կէօմրիւք թարիֆէլէրի իշիւն
Թիւրք հիւքիւմէթի իլէ միւզա-
քէրէտէ պուլընմազտա օլտըզըն-
տան, հազընէն պու մէսէլէնին հալլ
օլընմազը պէքէնիլմէքտէ տիր :

—Կէչէն ճուճա կիւնիւ Մ. Վէ-
լիլէգօֆ սէլամըզ ալայընտան սօն-
րա Մ. Մարքօֆ վասիթասը իլէ
Սուլթանըն հուգուրընա չըգուպ,
պիրինճի օսմանիլ նիշանընը գա-
պուլ իթմիլ տիր :

—Սթանպօլտա ինչա օլընմըլ
օլան Ս. Ստեփաննոս նամ պուլկար
քիլիլէսինին ըհսմի քիւշատը 8/20
սեպտեմբըրտէ իճրա օլընմազըն-
տան, պու միւնսէքէթլէ Սօֆիա-
տան պազը միւսթէլէր վէ ըա-
հիպլէր կիտէճէլէր, քէզա Բրէնս
հազրէթլէրի թարաֆընտան տալի
հալլէրնտան պիր զաթ կէօնտէ-
րիլէճէկի Գուշիկ տէ Պաշալիկ հաղ-
մըլ տըր :

ԹԵՐԻՔԻ ՍԻԼԱՆ

Ումուճի թէրքի սիւս մէսէլէ-
սի իշիւն տէվէթլէրին էքսէրիսի
մէպտէն Չարա հէմէֆէրիսի պու-
լընմազը վէ չօզլարը թէճէմմիւ-
օլընմազ Գօնֆէրանսա մուրախա-
լար հօլլամազ նիլէթինտէ իսէլէր
տէ, մէսէլէնին Չարըն թէքլիֆի
մուճիպ հալլ օլընմազազընը
Բէք չօք ճէրիտէլէր հաղմազտա
տըր : պա խուսուս ինկիլիլ վէ Ա-
մէրիգա կազէթալարը թէրքի սի-
լահ մէսէլէսինի պիր խէյալ նէ-
վինտէն թէլազգը իթմէքտէ տիր-
լէր :

Ալմանիա, Աւստրիա, իթալիա
վէ սայիր պապը ուֆազ տէվէթ-
լէր վէ ճէրիտէլէրին էքսէրիսի Չա-
րըն էֆէրանընա մէյալ կէօրիւնի-
օլլար : Ֆրանսա ճէրիտէլէրի իսէ,
հէքտիլէրինէ մուխալիֆ օլուպ,
պուլկարտան չօզլարը Ալգաս-Լօ-
րէնի թէքրար էլէ կէչիւրմէքսիլին
թէրքի սիւս իտէմէյիլ տէմէք
իսթէյօլլար : Ֆազաթ Բուսիս
պու թէքլիֆինտէ սէպաթ իտէր
իսէ Ֆրանսանըն տալի անը Բէք
րէտտ իտէճէկի մէմուլ օլընմազ :

Գրալլարըն վէ հիւքիւմտարա-
րըն չօզը պու մէսէլէտէն տօլայը
Չարա թէչէքիւրաթ վէ թէպրիք-
նամէլէր հօլլատըլար : Սուլթան
տալի պէօյլէ պիր շէյ հարմըլ
տէնիլիօր :

Վիսթիլիսարը կազէք նամ Բէս-
մի ճէրիտէ պիւտիլիլ տիրքի,
Բէթըսպուրկ ինկիլիլ էլիսի գօն-
ֆէրանս իշիւն ինկիլիլէրանըն Բու-
սիայա հէմէֆէրիսի պուլընտըզընը
պէյան իթմիլ : Ճէվապը գաթի
վէրմէք իշիւն Լօրտ Սօլպէրինին
Լօնտրայա ալտէթինէ պէքէնիլիլ,
վէ հէր հալտէ ինկիլիլէրտ տալի
Չարըն արզու ու մազսէտինէ գու-
վէթ վէրէճէք տէմիլ տիր :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԷ

—Սթանպօլտա Պէօյիլէքտէրէտէ
տէհէթլիլ պիր հանիլըն զուհուր
իտուպ, 350 խանէ վէ 70 տիւք-
քեան հանմըլ տըր :

—Պէյօլլուհտա Պօն Մարչէ
մաղազասընը Բէրտէսի պիրտէն
պիրէ աթէլէնմէսի իւզէրինէ պիր
վէլվէլէ չըգմըլ, հէր քէս էրմէնի
գօմիթէլէրի պօմպա աթմըլար
զանըն իլէ մաղազալարը գարայուպ
գաշմայա պաշլամըլար :

Պիլ ալսէլէ իշին հազըզաթը
անլաշըլուպ, հիւրէքլէր ըհաթ-
լանմըլ իսէ տէ, քօլիսիա պու իշտէն
տէ պազը շիւպհէլէր հիս իթմէք
պէհանէսի իլէ օնը պուլըն սըգըլ-
տըրուպ տէ բարա գարմայա չա-
լըլմազտա ըմըլ :

—Ալմանիա իմէքթաթօրը կիյ-
հօմըն Շարգա տօղրու իտէճէկի
հօլճըլըգտան տօլայը Ամանս Հա-
վաս շու հօլտա մալիւմաթ ալմըլ
տըր :

Կիյիսմ Սիւրիայը զիյարէթ իթ-
մէքտէն մաատա Պէրութա վէ Շամա

տալի կիտէճէք իմիլ : պուրալարը
աթ իւզէրինտէ կէզմէք արզու ի-
տէր իմիլ իսէ տէ հօլլար ուլկուհ-
սըզ վէ հարըլմասը տէ մէսարիֆէ
միւհիթաճ օլտըլընտան հիւքիւմէթ
անըն պու արզուտան վազ կէչմէ-
սինի թալիլիլ իթմիլ : շիմսի Պէ-
րուլտան Շամա չըմէնտըֆէրլէ
կիտէճէք վէ պուլըն իշիւն խու-
սուսի վալկօնլար հարըլմազտա տըր :

—Պապը Ալի՝ Սըրպ էլիլիսինին
թալէպի իւզէրինէ, իւսքիւպ վի-
լայէթի վուգուաթընտան տօլայը
կէօնտէրիլէճէք գօմիսիօնտա պիր
Սըրպ ազանըն տալի պուլընմա-
սընա ըն Վէրմիլ տիր :

Սայիտ բաշա էլան Բրիսթէնա-
տա օլուպ, Պէրան գարըլըգըլը
թէսքին օլընմըլ օլմաղլէ իւսքիւպ
ալտէթ իտէճէք տիր :

—Սուլթանըն ճիւլուսը միւնա-
սէպէթի իլէ Գարա տաղ Բրէնսի
իւսքիւպ վալիսի Հօֆըլ բաշայա
վէ քէզա սինօրտա գարըլըգըլը
թէսքին իտէն Սաատէտտին բա-
շայա Տանիլօ նիշանլարըն իհտա
իթմիլ տիր :

—Պիլիս վալիսի մէճիտ էֆէն-
տիյէ պիրինճի մէճիտիլէ նիշանը
իթա օլընմըլ օլտըլը պու հաֆիթա
կէլէն Սթանպօլ կազէթալարընտա
օգուհտը :

Մէշքիւր վիլայէթ տէ էրմէնիլէր
գըրըլմըլ, 8-10 քէօյ խարապ օ-
լընմըլ օլտըլընտան նաշի պու նի-
շան վէրիլմէլի տիր : նէ կիւզէլ
իսլահաթ :

—Սուլթան հէվմի ճիւլուսը օլ-
մազ միւնսէպէթի իլէ պիր ի-
րաաէ չըգարուպ, միւնտէթի ճէ-
զասընը 3 տէ 2 սինի իքմալ իթ-
միլ օլան մահպուլարըն թալիլիլ-
լէրի էմը իթմիլ տիր : քէզա պու-
լիստէ մուճիպինճէ հապստա պու-
լընան զապլիլիլ վէ քօլիսլէր
պիլա շարթ սէրպէսթ պըրազըլա-
ճազլար ըմըլ :

—Իզմիրտէ կէօմրիւք անպարըն-
տա հարիգ զուհուր իտուպ, 20
պին լիւրալըգ էթմաա հանմըլ տըր :

—Քէնտի աշըզը իլէ պիր օլուպ
գսճառընը էօլտիւրմիւլ օլան խա-
տիճէ նամ գատըն վէ աշըզը իպ-
րահիմ ճիւնայէթ մահքէմէսինտէ
իտամա մահքիւմ օլմըլար վէ Գիւ-
չիւք-Չէքմէճէտէ պաշլարը քէսի-
լէճէք տիր :

—Մէհմուդ Պէրուսան պէյին օլ-
լու Միւհաթ պէյ իսիլէն Մը-
սըրտա Գիւշարիսպան նամընտա
քիւրտէ պիր կազէթա նէշը իթ-
մէկէ պաշլամըլ տըր : պու զաթ
միւսթիւման օլմաղլէ պէրապէր քէն-
տիսինի վաթմանքէրվէր պիր քիւրտ
կէօսթէրէք, ումուճ տիւշմանէ
թիւրքէ գարըլ էրմէնիլէր իլէ
Գիւրտէրին իթմիլֆազ իթմէսի-
նին իզթիլպասընը հըսս իտէյօր :

—Թիւրք հիւքիւմէթինին թէք-
րար պէ թէքրար ըրթթէտտինէ
գարըլ, կիրիտին էօլիւր հասըլա-
թը սեպտեմբըր 3 տէ էվրօպըլ-
լարա թէքը ու թէպիմ օլընմազ
տըր :

—Խըտիլ հազընտա Սթանպօ-
լա կէլուպ, Սուլթանը զիյարէթ
իտէճէք :

—Փէնէլլալ Գիշնէր տօքէրլէրի
իլէ պէրապէր Գիշնէրինէ (Ա.Քրիպա)
գատար իլէրլէյուպ, տէրվիլէրի
կէրի սիւրմիւլ :

—Չար, Չարիցա հազարաթը
էվլատարը վէ մայէթի իլէ պէ-
րապէր Մօսկուտան Սէվաստա-
բօլա ալտէթ իթմէլէր :

—Լօնտա հալատիսաթընա
կէօրէ, Չինտէ ինկիլիլ թէհսի-
րինին թէմաճ գալմասը պապըն-
տա Բուսիս իզթիլֆա կէօսթէր-
միլ տիր : Չին հիւքիւմէթի ին-
կիլիլէրանըն թէքլիֆ ու արզու-
լարընը գապուլ իթմէտիկի հալին-
տէ Չին սուլարընտա պուլընան
ինկիլիլ տօնանմալարը Չին կէմի-
լէրինի վէ կէօմրիւքէրինի զապթ
իթմէք իշիւն էմիր ալմըլար :

Պուլկարիա տալիլինտէ հէր քիմ
քի 4 ֆրանգ Բէշին հօլլար պու
կիւնտէն իթիպարէն Դիկտեմբըր
նիհայէթինէ գատար կազէթալարը
գապուլ իտէպիլիլ :

ԶԱՅԻՐԷ ԲԻՍՅԱՍԻ

Վառնա, 26 Ապրիլ 1901
Պուշայ
Արապա, լիպրա 55-58 հէքթ. 8-9 ֆր.
Արապ
Լիպրա 42-50 հէքթ. 4. 60-5. 20 ֆր.
Ֆաստալէս
100 օգ. 16. 23 ֆր. մալընա կէօրէ:
Եուշաթ
Արապա 20-25. ֆիյաթ 3. 60-4 ֆր.
Տարր
Արապա 5-6. լիպրա 58-60. ֆր. 4. 60-5:
Կիւնտէ 300-350 արապա վէ 8-10
վալկօն պուլտայ, 100-120 արապա
արապ կէլմէքտէ տիր :
Ֆաստալէս 70-80 արապա:
Արապա մուսթէլէսի Լարօլէս 21 ֆր.
հիսապը իլէ :

«Պ. Շաւարշ կը խնդրէ մէնէ ծա-
նուցանել թէ ինք հրաժարած է
Շարժում լրագրի իմրագրութե-
նէն, որուն հետ ու է նիւթական
և բարոյական կապ չունի : »

Ա Ձ Դ

Շապին-Գարահիսարի Չըրտախ
գիւղացի Դանիէլ խօճիկեան անուն
40 ամիայ ազգայինը, 14 տարի
առաջ հայրենիքէն հեռացած՝ 9
տարի առաջ Պուրթէլի մէջ շաքա-
րագործութեամբ կ'ըբաղէր : Ով
որ գիտէ այս անձին հիմա ուր
գտնուիլը, թող հաճի իմացնել
«Իրաւունք»ի խմբագրութեան :

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ»
Նսր քաղաքում
Ի Ռ Ի Ս Ճ Ո Ւ Ք

Սիմիոնօֆի դրամատան դէմ
գտնուող նախկին «Մասիս»ի շէն-
քին մէջ, ուր կը պատրաստուին
տան խոհանոցի յատուկ մաքրու-
թեամբ համազամ կերակուրներ
և անուշեղէններ չափաւոր գինե-
րով : Փորձելը ստուգել է :

Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի գիւրամատչելի պայմաններով :

Отговорникъ М. Скововъ
Печатница „Взаимность“—Варна